

յառաջ կը բերէ «անշիջանելի ջահ կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցւոյն» խօսքը, որ միայն 1711ի թղթին մէջ կայ:

Կղեմէս ԺԱ.ի առ Աղեքսանդր Կաթողիկոս գրած պատասխանը նոյնպէս ցոյց կու տայ, որ շոտ՝ ալ իբր հպատակութիւն եւ դաւանութիւն նկատած չէ յիշեալ նամակն, հապա զայս կ'առաջարկէ Ս Քահանայապետն իր նամակով: Այս լատիներէն նամակն, որ ամէնուն անծանօթ մնացած է, արդէն 1786ին Յովհ. Սեղբոսեան հրատարակած էր (Compendio Storico, Venezia, t. I, էջ 392—396) կը լուսաւորէ շատ բան, եւ այս նպատակաւ աշխարհաբար թարգմանութեամբ յառաջ կը բերեմ:

Անիրազեկ եւ զուր վէճերու պատճառ եղած է Աղեքսանդրի նամակին երկու թուակաւ նաև գտնուիլը, մին 1709 Փետր. 25, եւ միւսն 1711 Ապրիլ 16, ինչպէս վերն յիշեցի, եւ ցայժմ գրողներ՝ մին կամ միւսը միայն ծանօթացած ըլլալով՝ ի վիճակի չեն եղած համեմատելու: Երկու բնագիրներն ալ յառաջ կը բերեմ լաւագոյն հրատարակութիւններու համեմատ, եւ երկուքին տարբեր բառերն ու խօսքերը կը ստորագծեմ: Իսկ 1709ի նամակին բնագիրն Վիեննայի Մխիթարեանց Մատենադարանին ձեռագիրներուն մէջ գտնուելով (նոր օրինակութիւն տ. Տաշեան, Մ. Յուլցակ, էջ 180), նոյն նամակին ստորոտը կը դնեմ կարեւոր տարբերութիւնները: